

# ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

## ՆՈՐԻՑ «ԳՈԼԵՍԹԱՆԻ» ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ա. Մ. ՄԻՆԱՍՅԱՆ

«Պատմա-բանասիրական հանդես»-ի 1963 թ. № 2-ում տպագրված է Մ. Թիրևաքյանի «Մի քննադատության առթիվ» հոդվածը, որ վերաբերում է նույն հանդեսի նախորդ տարվա № 3-ում տպագրված «Սաադիի «Գոլեսթանը» և նրա հայերեն թարգմանությունները» մեր ուսումնասիրությանը: Այդ հոդվածում հեղինակը շոշափում է մի շարք հարցեր, որոնցից մի քանիսին մենք կանդրադառնանք ստորև:

1. Մեր հոդվածում մեջ բերելով «Գոլեսթանի»՝ Թիրևաքյանի թարգմանությունից հետևյալ երկու տողը՝

Ինչ էլ լեզուն խելով մաղու բերին մեջ.

Գանձաբանի դրան իմաստնույն մի կըղպանի.

մենք գրել ենք. «ընդհանուր առմամբ ճիշտ է», սակայն այս գնահատականը Մ. Թիրևաքյանին չի գոհացնում, որովհետև շարունակության մեջ ասված է. «միայն Բելիդ (Բանալի) բառը թարգմանված է կղպանք, մինչդեռ կղպանքը ղոֆլ է»: Մի՞թե այս ճշմարտության դեմ կարելի է առարկել: Հետևել քննադատի այն բացատրությանը, թե «կղպանքը բանալիին կծառայի և բանալին ալ՝ կղպանքին» և դրա հիման վրա դրանք նույնացնել՝ ճիշտ չի լինի, քանի որ դա շատ հեռու կարող է տանել, որովհետև շատ իրեր և անձեր ծառայում են իրար, սակայն տարբեր բաներ են և յուրաքանչյուրն ունի իր անունը: Օրինակ՝ մեկանը ծառայում է գրչին, և գրչին էլ՝ մեկանին և կամ թուղթը մատիտին է ծառայում, իսկ մատիտը՝ թղթին, բայց մի՞թե սրանք նույնն են և մեկի ամբամբ կարելի է կոչել մյուսը: Իսկ ինչ վերաբերում է այն բանին, թե թարգմանիչը չափի համար է այդպես վարվել, ապա դրա դեմ մենք առարկություն չունենք, այլ պարզապես իրողությունն ենք ցույց տվել:

2. Քննադատը դժվո՞հ է նաև մեր գործածած «Այստեղ սեհրուրդը դարձել է սիրուն մի էակ» արտահայտությունից: Նա ամբողջ պարբերությունը անտեսում է և վերցնում միայն առանձին բառեր ու արտահայտություններ և դրանց շուրջը վիճում: «Դարձել է» արտահայտությունը դեռևս չի նշանակում, թե սխալ է. մենք պարզապես ցույց ենք տալիս, թե թարգմանության ընթացքում յուրաքանչյուր թարգմանիչ ինչպես է վարվել և շեշտը դրել ենք Մելիք-Վարդանյանի թարգմանության վրա, քանի որ շարունակության մեջ ասվում է. «ամենաճիշտը Աճառյանի թարգմանությունն է. հաջողված են նաև մյուս երեքը (խոսքը վերաբերում է Թիրևաքյանի, Մաքսուտյանի և Ամուրյանի թարգմանու-

թյուններին): Եթե ասված է հաջողված են, ուրեմն նշված փոփոխումները սխալ չեն դիտված, այլ պարզապես համարված են թարգմանական մոտեցումներ, մինչդեռ Մելիք-Վարդանյանի թարգմանության մասին որոշակի ասված է. «խճողված է անտեղի բառերով»:

Մեջ բերելով մեր հոգվածի հետևյալ տողերը՝ «բանաստեղծության փոխադրումը մի այլ լեզվի իրավունք է տալիս թարգմանչին հարկ եղած դեպքում կատարել նաև հավելումներ, ինչպես և որոշ փոփոխումներ, սակայն ոչ իմաստից հեռանալու չափ», մեր քննադատը տարօրինակորեն դրանք վերագրում է իր հոր թարգմանությանը, դուրս թողնելով Մելիք-Վարդանյանին վերաբերող տողերը, մինչդեռ այդ բոլոր օրինակները բերված են Մելիք-Վարդանյանի կատարած շեղումները ցույց տալու համար:

3. Երբ մենք գրում ենք, թե «Մտորին մարդիկ երբ կտեսնեն, որ չեն կարող արժանիքով մրցիլ խելի, տաղանդի աւեր մարդոց հետ, կջանան բամբասակ, անվանաբեկ» տողերում ընդգծված կրկնակի հոմանիշներից մեկականն ավելորդ է, Ե. Թիրևաքյանն առարկում է, գրելով՝ «նախ որ խելք և տաղանդ հոմանիշ բառեր չեն, երկրորդ՝ այդ երկու բառերը հանված են պարսկերեն հոմանիշներից, իսկ հոմանիշը միայն մեկ իմաստ չունի, այլ տեղի համեմատ կնշանակե արվեստ, վարպետություն, հնարամտություն, խելք, տաղանդ, հանճար, կարողություն»: Սակայն սա դեռ չի նշանակում, որ թարգմանության մեջ հիշյալ բոլոր բառերը պետք է թվարկվեն: Բնադրում դրանք մեկական են:

4. Քննադատը ցանկանում է, որ մենք ցույց տանք, թե այն ո՞ր 12 տողն է, որ չի թարգմանել Թիրևաքյանը: Այդ տողերը պետք է հաջորդեն Թիրևաքյանի թարգմանության 11-րդ էջի «ինչ որ անկայուն՝ մի՛ սիրեր վանի, սեր կապել չարժեր մեր այս դաժանի» տողին: Հիշյալ հատվածը կա Յրանցիս Զոնսոնի (1863), Զոն Փլատսի (1874) թարգմանություններում, երևանի Պետական համալսարանի հրատարակած «Գուլեսթան»-ի մեջ (1941) և պարսկական մի շարք Քոլլեյաթներում:

«Եթե մեռնես ժողովուրդը քեզից կապտովի և դու էլ մեղքերից» տողի մասին մենք գրել ենք, որ Մելիք-Վարդանյանը, ինչպես նաև Թիրևաքյանը չեն թարգմանել և ավելացրել ենք. «թերևս նրանց ձեռքի տակ եղած պարսկերեն օրինակներում ևս այս նախադասությունը արտագրումների ընթացքում դուրս է մնացել»: Պետք է ասել, որ հիշյալ նախադասությունը կա ինչպես Զոն Փլատսի, այնպես էլ Յրանցիս Զոնսոնի թարգմանություններում և Քոլլեյաթի մեջ (1298):

Քննադատը մեզ առարկում է, ասելով, թե՝ «Ինչ փաստ ունի Մինասյանը ընդունելու համար, թե իր հիշած հատվածը հարազատ է. կարելի է նույնքան իրավունքով, և ավելի մեծ հավանականությամբ ըսել՝ թե այդ տողերը ավելացված են «արտագրումների ընթացքում», այլ խոսքով՝ ընդմիջարկություն է և ըստ այնմ կարգ մը օրինակներն «դուրս մնացած» ըլլալու հարց չկա: Բայց սա որոշ է, թե մեծամասնությունը չունի դերվիշի պատասխանին այդ հավելյալ, շինծու մասը»:

Կարծում ենք, որ մեր քննադատը ևս չի կարող հակառակը պնդել և հայտարարել, թե դա «հավելյալ շինծու մաս» է, քանի որ չունի ապացուցող փաստարկներ:

5. Հաջորդ առարկությունը «Ձեռն մկար ֆլեդ»-ի թարգմանությանն է վերաբերում, սակայն քննադատի մատնանշած և ոչ մեկ բառարանում «զմայ

լիլ» բառը այնուամենայնիվ միայն հարբել, արբենալ չի նշանակում: Մալխասյանը գրում է. 1) ուտելով լիանալ, հագենալու հաճույք զգալ: 2) Մասնավորապես՝ գինի խմելով զվարթանալ, խիստ լավ տրամադրություն ստանալ: 3) Մի հաճույական բանով սաստիկ գրավվել, հիանալ, հրաշանալ, մայլել, մայիլ մնալ: Եվ բերում է հետևյալ օրինակները՝ «Բոլորն զմայլվում էին նրա չքնաղ գեղեցկությամբ: Սոխակին էին լսում զմայլած»: Նշված ո՛չ բացատրությունները և ո՛չ էլ բերված օրինակները հարբելուն չեն վերաբերում, այլ հիանալուն, զմայլելուն, հրապուրվելուն: Նմանապես և «Հայկազյան» բառարանում. «կուշտ մը վայելել անուշ ըմպելիքը, զվարճանալ, զվարթանալ, կշտաճալ հոգվով կամ մարմնով»: Սրանք ևս չեն խոսում հարբել բառի օգտին:

Մենք բոլորովին համամիտ չենք քննադատի այն կարծիքին, թե «զվարթանալը, խիստ լավ տրամադրությունը հառաջ կուգա, ինչպես հայտնի է, հարբած վիճակ»: Մի՞թե բոլոր զվարթ և խիստ լավ տրամադրություն ունեցողները հարբած վիճակում են:

6. Նևիլլենդ-ի առթիվ մեր քննադատի տված բացատրությունը («Սաագին իր մտքի պարտեզներ ծաղիկներ կթաղե, կհրամցնե զանոնք ընթերցողին, կազմելով ծաղկաստան մը, որով գեղեցկորեն կպատշաճի «ծաղկաքաղ»-ը «Կոչևստան»-ի հեղինակին») ամենևին չի համապատասխանում «Գոլեսթանի» հեղինակին, որովհետև այստեղ խոսքը բնավ ծաղիկներ քաղելու և ընթերցողին հրամցնելու մասին չէ, այլ իր, այսինքն՝ Սաագիի արժանիքների անտեսման մասին է.

Մաղկաճաղ եմ ես, բայց ոչ ի բուրաստան  
Կեղեցիկ եմ քեզ, բայց ոչ ի Քանան: (Հ. Թ.)

նույնը՝

Մաղկաբաւ եմ ես, բայց ոչ պարտեզում  
Կեղեցիկ եմ ես, բայց ոչ Քանանում: (Հ. Աճ.)

Ահա այստեղ գործածված ծաղկաբաւի մասին է, որ մենք «ավելի հարմար» ենք գտել և չենք սխալվել:

7. Մեր քննադատը հակված է իր հարգելի հոր թարգմանությանը վերագրել մեր մի շարք դիտողությունները և զրանով մեզ վրա մեղադրաճեք բարդել: Այդպես է վարվել նաև հետևյալ օրինակում. ֆելիկս-ի համար մենք գրել ենք. «Մելիք-Վարդանյանը թարգմանել է թե՛ «կրոնավոր» և թե՛ «աստվածաբան». բուն իմաստն է «հրավազետ» կամ «օրենսգետ», ինչպես թարգմանել է Թիրևաքյանը»: Մի՞թե այս կարող է տարակարծության տեղիք տալ: Չէ՞ որ խոսքը Մելիք-Վարդանյանի մասին է, և ոչ թե Թիրևաքյանի:

8. Քննադատն առարկում է նաև պարսկերեն մի շարք բառերի (ղազի, մուսհաֆ, նասրանի, արաֆ, թէքե, խաթիր) օգտագործման դեմ արած մեր դիտողությանը, բացատրելով, որ դրանք «ընդհանրացած են արևմտահայոց մեջ», «արևելքի մեջ ծանոթ անում է» և կամ «ընդհանրացած է արևելյան երկրիներում մեջ»: Բայց մի՞թե դիրքը հայերեն թարգմանելիս նկատի են ունենում հայության մի հատվածի ընթերցողներին և կամ սոսկ «Գոլեսթան»-ը ուսումնասիրողներին: Երբ մենք ցանկություն ենք հայտնում որոշ բառեր թարգմանելու մասին, նկատի ունենք ընթերցողների մեծամասնությանը:

9. Հարգելի քննադատը իր զայրույթն է հայտնում այն առթիվ, որ մեր հոգվածում մի քանի բառերի կապակցությամբ գործածված է «և այլն» դարձվածքը կամ ցույց չեն տրված համապատասխան էջերը: Նա գրում է. «Քննա-

դատը թերացած է ցույց տալու, ինչպես շիտակ ըրած էր մինչ այդտեղ, թե վերի տրուառերը Թիւրեաքյանի հաշվին պետք է անցնել, նշանակելով էջերը, որպէսզի նախ հայտնի ըլլա այս իրողութիւնը, երկրորդ և ավելի կարեւոր՝ ժամանակ և հոգեմտութիւն խնայելի, եթէ ոչ հետաքրքիրներու, զեթ զիտողութիւններուն զեմ պատասխանողին: Արդյոք տիկին Մինասյան չէ՞ր սպասեր, որ կրնար այդպիսի մեկը գտնուիլ աշխարհի մեկ անկյունը»:

Մեր կարծիքով արդարացի չէ մեր քննադատի այն պահանջը, թե փոքրածափալ մի հողվածում, ինչպիսին մերն էր, պետք է ամեն ինչ ամենայն մանրամասնութեամբ թվարկել: Ինչ վերաբերում է նրա վերջին հարցին, պարտք ենք համարում հիշեցնել, որ մեզ վաղուց հայտնի է ոչ միայն «Գոլեսթանի» թարգմանիչ հարգարժան գոկտոր Հարութիւն Թիւրեաքյանի գործն ու անունը, այլև մեր քննադատ պ. Միհրդատ Թիւրեաքյանի, ոտն իր հոր թարգմանած «Գոլեսթանի» հրատարակիչն է և «Շահնամի» թարգմանիչը: Ի դեպ նշենք, որ մեր քննադատի այդ թարգմանութեան առթիւ մենք զրախոսական ենք հրապարակել զեռես ինք տարի առաջ «Սովետական Հայաստան» ամսագրի 1954 թ. № 8-ում:

10. Չենք կարող համաձայնել մեր քննադատի հետ նաև այն հարցում, երբ նա փորձում է արդարացնել թարգմանիչների բացթողումներն ու կրճատումները (ի դեպ, հողվածում մէջք հիմնականում նկատի ենք ունեցել Միլիք-Վարդանյանի թարգմանութիւնը, քանի որ նրա մոտ զրանք առավել ակնհայտ են):

Նշենք նաև, որ ոչ բոլոր բացթողումներն են, որ «պատշաճութեան» նպատակով են արված, այլև երբեմն անուշադրութեան հետեանքով և կամ տարբեր միտումներով ու պատճառներով: Սակայն մեր իսկ բառերով արտահայտած «թերևս պատշաճութեան համար» դիտվածների կապակցությամբ էլ մենք դարձյալ պնդում ենք, որ զրանք պիտական հրատարակութեանը չեն վերաբերում: Եթէ թարգմանութիւնը կատարված լիներ միայն աշակերտութեան համար, ապա անշուշտ ճիշտ կլինէր այդպիսի մոտեցումը, բայց քանի որ Թիւրեաքյանի թարգմանութիւնը որեւէ այլ նպատակի համար չի նախատեսված (զոնն առաջաբանում որեւէ նշում չկա այդ մասին), ուստի և մեր քննադատի պնդումը մենք իրավացի չենք համարում: Թույլ տվեք հարցնել, հապա ինչպէս պետք է վարվել «Թեկամբոնը» հրատարակելիս: Այդ դրքի ո՞ր մասերը կրճատել:

Այստեղ ոչ այնքան «ճաշակի և ըմբռնումի» հարց է, ինչպես զրում է մեր քննադատը, այլ հրատարակութեան դիտակաւութեան, ամբողջականութեան և լիարժեքութեան հարց:

#### СНОВА ОБ АРМЯНСКИХ ПЕРЕВОДАХ «ГОЛЕСТАН»-а

А. М. МИНАСЯН

(Р е з ю м е)

Статья является ответом на критические замечания М. Тиреакяна (см. «Историко-филологический журнал», 1963, № 2), сделанные им в адрес автора в связи с ее первой статьей. см. «Историко-филологический журнал», 1962, № 3). Анализируя доводы М. Тиреакяна, автор показывает, что большая их часть неприемлема.